ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԳԵՈԴԵԶԻՍՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՈՎ՝ I ԴԱՍԻ ՄԱԿԱՐԴԱՉԱՓՈՒՄՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-3/26-03/11

ՀԱԷԿ ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳԸԲ) 03/11 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«06» 03 2026թ

ք. Մեծամոր

**«ՀԱԷԿ» ՓԲԸ**-ն, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ - ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 05.05.2025 թվականին տրված լիազորագրի հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

**«ԵՐԿՐԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Արամ Ստեփանյանի, որը գործում է «ԵՐԿՐԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Հայկական ԱԷԿ-ի շենքերի և շինությունների նստվածքների չափումներ գեոդեզիստական մեթոդով՝ I դասի մակարդաչափումով** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 **Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման պատասխանների արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:**

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 **Ծառայությունը մատուցել բացառապես որակավորման վկայականը ներկայացրած մասնագետի՝ Էրիկ Մանվելի Հովսեփյանի միջոցով:**

2.4.5 **Պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կատարողի կողմից վերընշված փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն չի երաշխավորում 50 օրում անցագրերի տրամադրումը:**

2.4.6 **Պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:**

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **12000000 (տասներկու միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ **ԱԱՀ - 2000000** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-

ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **24** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Սույն պայմանագրի ստերագրմամբ Կատարողը հաստատում է, որ ծանոթացել է «Կոռուպցիոն բնույթի փաստերի և կասկածների մասին տեղեկացնելու ընթացակարգի վերաբերյալ» Հուշաթերթին:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,
**Հ/Հ** 1930000199200100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,
**ՀՎՀՀ** 04401874,
**Հեռ./ֆաքս**՝ 28-18-80, 28-06-69,
**Հեռ.**՝ 20-04-91, 36-32
**E-mail**: anpp@anpp.am

........................ **Ս. Մաթևոսյան**

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԵՐԿՐԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ**

0014, ք. Երևան, Արգիշտի փողոց,
11/12 շենք, բնակարան 32,
**Հ/Հ** 1570067808350100,
«Ամերիաբանկ» ՓԲԸ,
**ՀՎՀՀ** 02830174,
**Հեռ.**՝ 093-99-90-68,
**E-mail**: centregeospatial@gmail.com

........................ **Ա. Ստեփանյան**

***Պայմանագրի կառավարիչ՝ Աշոտ Գրիգորյան,***
***հեռ. 010282960, email: ashot.grogoryan@anpp.am***

Հավելված N 1
«06» 03. 2026թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-3/26-03/11 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71631140 | Իրականացնել ՀԱԷԿ-ի շենքերի և շինությունների նստվածքների չափումներ գեոդեզիստական մեթոդով, I դասի մակարդաչափումով, ըստ կցված ծավալաթերթի:<br>Աշխատանքների հանձնման ժամանակ ներկայացվող փաստաթղթերը.<br>1. Խորքային հենանիշների նստվածքների ամփոփագիր:<br>2. Հողային և ժամանակավոր հենանիշների նստվածքների ամփոփագիր (առկայության դեպքում):<br>3. I կարգի շինությունների դեֆորմացիոն հենանիշների նստվածքների ամփոփագիր՝ յուրաքանչյուր շինության համար:<br>• Ամփոփագրերը ներկայացնել համեմատական նախկին դիտարկումների հետ, որոնք իրականացվել են 1993, 2002-2003, 2009 և 2020 թվականներին:<br>• Բոլոր ամփոփագրերը ներկայացնել թղթային՝ 4 օրինակ և էլեկտրոնային (կրիչով) տարբերակներով, հայերեն և ռուսերեն լեզվով:<br>Կից՝<br>**Հավելված 1.** Ծավալաթերթ - 2 թերթ.<br>**Հավելված 2.** ՀԱԷԿ-ի շինությունների, հենաբարձունքային ցանցի և նստվածքային նշանների սխեմա (2020 թ. դիտարկումների շարք) - 1 թերթ.<br>**Հավելված 3.** ԳՄ I դասի մակարդաչափման սխեմա - 1 թերթ. | լրակազմ | 12 000 000 | 1 | Արմավիրի մարզ, ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ | Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվում 150 (հարյուր հիսուն) օրացուցային օր: Ծառայության մատուցման սկիզբ է համարվում ՀԱԷԿ ՓԲԸ տարածք մուտքի թույլտվություն ստանալու հաջորդ օրը, բայց ոչ ուշ, քան պայմանագրի կնքման օրվան հաջորդող 70-րդ օրը: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ***Հավելված.4***. *Գլխավոր մասնաշենքի, օդափոխության խողովակի և ՍԿԼՄ I դասի մակարդաչափման սխեմա - 1 թերթ.*<br>***Հավելված 5***. *ՀԱԷԿ-ի տուրբոգեներատորների վրա նստվածքային նշանների սխեմա - 1 թերթ.*<br>***Հավելված 6***. *№№1, 2, 3, 4 հովացման աշտարակների I դասի մակարդաչափման սխեմա - 1 թերթ.*<br>***Հավելված 7***. *ԱՄՎԶՊՊ I÷IV վրա I դասի մակարդաչափման սխեմա, 2020թ. I դիտարկումների ցիկլ - 1 թերթ.*<br>***Հավելված 8***. *Ցայտավազանների վրա I դասի մակարդաչափման սխեմա, 2020թ. I դիտարկումների ցիկլ - 1 թերթ.*<br>***Հավելված 9***. *ՀԱԷԿ-ի հեռացնող, մոտեցնող ջրատարների վրա I դասի մակարդաչափման սխեմա, 2020թ.- 1 թերթ.*<br>***Հավելված 10***. *ՍԿԼՄ վրա I դասի մակարդաչափման սխեմա, 2020թ. - 1 թերթ*<br>***Հավելված 11***. *I դասի մակարդաչափման սխեմա «II վերհան» պոմպակայան, №1, №2 ջրընդունիչներ, ԲԲՍ, ԳՊԿ, ԴԳԿ, դիզել պոմպակայան և ԲՊԿ - 1 թերթ.*<br>***Հավելված 13***. *ՀԱԷԿ-ի օդափոխության խողովակի կողաթեքման ուսումնասիրության սխեմա – 1 թերթ.* | | | | |

***Լրացուցիչ պայմաններ՝***

1. **Ծառայությունների իրականացման համար պահանջվում է գործունեությանը համապատասխանող որակավորում՝ համաձայն «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 16.1 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեությամբ զբաղվող Կադաստրի կոմիտեի կողմից որակավորման վկայական ստացած անձինք:**
2. **Ծառայությունները իրականացնելու համար անհրաժեշտ նյութերը, սարքեր-սարքավորումները ձեռք է բերելու Կապարողը:**
3. **Ծառայությունների կատարման ժամկետը՝ ՀԱԷԿ-ում մուտքի թույլտվություն ստանալու պահից 150 օրացուցային օրվա ընթացքում:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

**Ս. Մաթևոսյան**

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԵՐԿՐԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ**

**Ա. Ստեփանյան**

*Պայմանագրի կառավարիչ՝ Աշոտ Գրիգորյան,*
**հեռ. 010282960, email:** *ashot.grogoryan@anpp.am*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ / ВЕДОМОСТЬ

«ՀԱԷԿ» ՓԲԸ շենքերի և շինությունների նստվածքների չափումներ գեոդեզիստական մեթոդով, I դասի մակարդակաչափումով

Измерение осадок геодезическими методами зданий и сооружений ЗАО «ААЭК», нивелированием I класса

| №№ | Օբյեկտի անվանումը<br>Наименование объекта | Չափի միավորը<br>Единица измерения | Նիշերի քանակը (հատ)<br>Количество марок (шт) | Ծանոթություն<br>Примечание |
|---|---|---|---|---|
| 1. | Գլխավոր մասնաշենք<br>Главный корпус | հատ<br>шт | 78 | Ведомость утвержденным ГИ ААЭС от 03.03.2025г. |
| 2. | Սանիտարակենցաղային լաբորատոր մասնաշենք (ՍԿԼՄ)<br>Санитарно-бытовой лабораторный корпус (СБЛК) | հատ<br>шт | 7 | |
| 3. | Օդափոխության խողովակ: Օդափոխության խողովակի կողաթեքման ուսումնասիրություն:<br>Вентиляционная труба. Ннаблюдения за кренами вент трубы | հատ<br>шт | 3 | |
| 4. | Տուրբոգեներատորներ №1÷4<br>Турбогенераторы №1÷4 | հատ<br>шт | 38 | |
| 5. | Ջրահովացման աշտարակներ<br>Градирни | հատ<br>шт | 48 | |
| 6. | ԱՄՎՋՊՊ I÷IV<br>СХОЯТ I÷IV | հատ<br>шт | 12 | |
| 7. | Ցայտավազաններ<br>Брызгальные бассейны | հատ<br>шт | 48 | |
| 8. | Պոմպակայաններ- ՊՍՀՀ №1, ՊՍՀՀ № 2<br>Насосные станции - СООП №1, СООП №2 | հատ<br>шт | 8 | |
| 9. | Հեռացնող, մուտեցնող ջրատարներ<br>Отводящий и подводящий каналы | հատ<br>шт | 39 | |
| 10. | Հատուկ մասնաշենք<br>Специальный корпус | հատ<br>шт | 14 | |
| 11. | "II-րդ վերհան" պոմպակայան<br>Насосная станция "II-го подъема" | հատ<br>шт | 4 | |
| 12. | Բլոկային պոմպակայան (ԲՊԿ)<br>Блочно-насосная станция (БНС) | հատ<br>шт | 4 | |
| 13. | Գործարկա-պահուստային կաթսայատուն (ԳՊԿ)<br>Пуско-резервная котельная (ПРК) | հատ<br>шт | 4 | |
| 14. | Դիզել-գեներատորային կայան (ԴԳԿ)<br>Дизель-генераторная станция (ДГС) | հատ<br>шт | 2 | |
| 15. | Դիզել պոմպակայան<br>Дизель насосный | հատ<br>шт | 3 | |
| 16. | №1, №2 ջրընդունիչներ<br>Водоприемники №1, №2 | տեղ<br>место | 8 | |
| 17. | Բաց բաշխիչ սարքավորում (ԲԲՍ)<br>Открытое распределительное устройство (ОРУ) | տեղ<br>место | 4 | |
| 18. | Սնուցման պոմպակայան<br>Насосная станция подпитки | հատ<br>шт | 4 | |
| 19. | Փոխանցում աշխատանքային հենանիշներից<br>Передача от рабочих реперов | հատ<br>шт | 60 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ***Աշխատանքների հանձնման ժամանակ ներկայացվող փաստաթղթեր.*** ***Документы, предоставляемые при сдаче работы:*** | | | |
| 1. | Խորքային հենանիշների նստվածքների ամփոփագիր<br>Ведомость глубоких реперных осадков | հաշվետվ. отчет | 1 | |
| 2. | Հողային և ժամանակավոր հենանիշների նստվածքների ամփոփագիր (առկայության դեպքում)<br>Ведомость грунтовых и временных реперных осадков (если таковые имеются) | | | |
| 3. | I կարգի շինությունների դեֆորմացիոն հենանիշների նստվածքների ամփոփագիր՝ յուրաքնչյուր շինության համար<br>Ведомость деформационых реперных осадков зданий класса I, для каждого здания | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

.......................... **Ս. Մաթևոսյան**

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԵՐԿՐԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ**

.......................... **Ա. Ստեփանյան**

*Приложение 2*

# СХЕМА

**СООРУЖЕНИЙ, ОПОРНО-ВЫСОТНОЙ СЕТИ И ОСАДОЧНЫХ МАРОК АРМЯНСКОЙ АЭС ЦИКЛ НАБЛЮДЕНИЙ 2020 г**




**УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ**

- Глубинные реперы
- Грунтовые кустовые реперы
- Вновь заложенные реперы
- Грунтовые реперы и ходы опорной высотной сети
- NN полигонов опорной высотной сети
- Осадочные марки на сооружениях

Составил [signature] З.Шагинян

*Приложение 3*

# С Х Е М А
## нивелирования I класса главного корпуса




### УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ

- Глубинные реперы
- Грунтовые реперы
- Ход нивелирования I класса
- 303-5 Номер осадочной марки (303) и номер колонны (5) на которой она установлена

Составил З.Шагинян

Приложение N 4

# СХЕМА
## Нивелирование I класса
### Главний корпус, вентиляционная труба и санбыткорпус




УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ

Глубинные репери

Гвунтовые репери

Хды нивелирования I класса и осадочные репери

Составил З.Шагинян

22

*Приложение 5*

# С Х Е М А
## расположения осадочных марок на турбогенераторах Арм. АЭС




**УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ**

- Глубинный репер
- Ходы нивелирования I класса
- Наблюдаемые осадочные марки

Составил [подпись] З.Шагинян

СХЕМА

Градирние NN 1,2,3,4

нивелирования I класса




УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ

◎ Грунтовые реперы

Ходы нивелирования I класса

108 Номер осадочной марки

Составил З.Шагинян

30

*Приложение 7*

# СХЕМА
## НИВЕЛИРОВАНИЯ I КЛАССА НА СХОЯТ I ÷ IV
## I ЦИКЛ НАБЛЮДЕНИЙ
## 2020 ГОД




УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ

- Грунтовые реперы
- Вновь заложенные временные реперы
- ходы нивелирования I класса
- Осадочные марки на сооружениях СХОЯТ (Система Хранения Отработанного Ядерного Топлива)

Составил ... З.Шагинян

32

*Приложение 8*

# СХЕМА

## НИВЕЛИРОВАНИЯ I КЛАССА НА БРЫЗГАЛЬНЫХ БАССЕЙНАХ ААЭС
## I ЦИКЛ НАБЛЮДЕНИЙ
## 2020 ГОД




УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ

- Грунтовые реперы
- Номер хода высотной сети
- Осадочные марки на сооружениях

Составил З.Шагинян

Приложение N 9

# СХЕМА
## НИВЕЛИРОВАНИЯ I КЛАССА НА ОТВОДЯЩИХ И ПОДВОДЯЩИХ КАНАЛОВ ААЭС 2020 ГОД




Условные обозначения

- Глубинные реперы
- Грунтовые реперы
- Щ-17 Щелемеры и ходы нивелирования Iкласса
- Наблюдаемые осадочные марки

Составил

# СХЕМА

Приложение N 10

## НИВЕЛИРОВАНИЯ I КЛАССА НА СБЛК
## 2020 ГОД




УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ

Глубинные репери

Гвунтовые репери

Хды нивелирования I класса и осадочные репери

Составил З.Шагинян

42

Приложение N11

# СХЕМА

## НИВЕЛИРОВАНИЯ I КЛАССА
## НАСОСНАЯ СТАНЦИЯ "II-ГО ПОДЪЕМА", ВОДОПРИЕМНИКИ №1, №2, ОРУ, ПРК, ДГС, ДИЗЕЛЬ НАСОСНЫЙ И БНС




Составил З.Шагинян

47

*Приложение 13*

# СХЕМА
## НАБЛЮДЕНИЯ ЗА КРЕНАМИ ВЕНТТРУБЫ ААЭС




УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ

Пункты и стороны полигонометрии высокой точности

Наблюдаемый знак на сооружении

металлический стержень L = 1.0md = 50 мм

Составил З.Шагинян

Հավելված N 2
«06» 03, 2026թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-3/26-03/11 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71631140 | Հայկական ԱԷԿ-ի շենքերի և շինությունների նստվածքների չափումներ գեոդեզիական մեթոդով՝ I դասի մակարդաչափումով | | | **12 000 000** | 12 000 000 | 12 000 000 | 12 000 000 | 12 000 000 | 12 000 000 | 12 000 000 | 12 000 000 | 12 000 000 | 12 000 000 | **12 000 000** |

*Վճարումը կկատարվի անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, փաստացի մատուցված ծառայության հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**
Ս. Մաթևոսյան

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԵՐԿՐԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ**
Ա. Ստեփանյան

*Հավելված 3*
*«        »                20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ________________________ | հհ__________________________ |
| հվհհ ______________________ | հվհհ________________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «              » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝   __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«      »           20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«        »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________________-ի և ____________________-ի միջև «—»     20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը            կատարողի անվանումը

«———/———» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

__________________-ի   միջև  «—»  20  թ-ին կնքվել է «——————» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________          ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«—»     20  թ.